Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության
2012 թվականի գործունեության

Գյուղատնտեսությունը հանդիսանում է հանրապետության տնտեսության առանցքային ոլորտներից մեկը և ունի չափազանց մեծ դեր ու նշանակություն երկրի անվտանգության, կենսագործունեության և տնտեսության կայունացման գործում: Բավական է նշել, որ 2007-2011 թվականներին գյուղատնտեսությունը ապահովել է երկրի համախառն ներքին արդյունքի 13.4 տոկոսը, իսկ 2012 թվականին՝ 14.3 տոկոսը, ինչը 2011 թվականի համեմատ աճել է 1.7 տոկոսով:

2012 թվականին գյուղատնտեսության համախառն արտադրանքը, փաստացի գներով, կազմել է 50313.0 մլն դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ, համադրելի գներով, աճել է 23.9 տոկոսով:

2012 թվականին ԼՂՀ գյուղատնտեսության նախարարությունը շարունակել է ոլորտի մի շարք ծրագրերի և միջոցառումների իրականացման քաղաքականությունը:

Այսպես, բուսաբուծության բնագավառում նախարարության գործունեությունը նպատակաուղղված է եղել հողօգտագործման ու բուսաբուծության վարման կատարելագործման և գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման հիմնահարցերի լուծմանը:

Աշնանացան մշակաբույսերի խնամքի, եգիպտացորենի և գարնանացան նոր մշակաբույսերի մշակության աշխատանքների իրականացման նպատակով նախարարության կողմից պարբերաբար հրավիրվել են սեմինար-խորհրդակցություններ, ինչպես նաև մասնագետները շրջաններում հանդես են եկել համապատասխան խորհրդատվությամբ:

ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ

/հեկտար/

Հ/հ	Շրջանը	Վարելահող ընդամենը	այդ թվում			
			համայնքի վարչական սահմաններում			ՊՊՖ
			Ընդամենը	որից		
				սեփական.	համայնքի սեփականություն	
1	Ասկերան	21589,34	14669,64	7258,37	7411,26	6919,7
2	Հադրութ	34182,65	7246,22	3457,33	3370,976	26936,43
3	Մարտակերտ	19801,04	15219,32	6312,43	8906,9	4581,72
4	Մարտունի	28433,07	21508,07	11827,52	9680,55	6925.0
5	Շահումյան	305,53	305,53	220,59	84,94	
6	Շուշի	131,67	131,67	116,64	15,03	
7	Քաշաթաղ	20435,22	16090,75	85,23	16005,52	4344,47
Ընդամենը		***124878.52***	***75171.2***	***29278.11***	***45475.18***	***49707,32***

Ըստ հողային հաշվեկշռի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում առկա է մոտ 124878.5 հա վարելահող, որը կազմում է գյուղատնտեսական նշանակության հողերի 21.0 տոկոսը, ընդ որում վարելահողերից սեփականաշնորհված է 29278.1 հա կամ ընդհանուր վարելահողերի 23.4 տոկոսը, համայնքի սեփականություն է 45475.2 հա կամ ընդհանուր վարելահողերի 36.4 տոկոսը, պետական պահուստային հողերը կազմում են 49707.3 հա կամ ընդհանուր վարելահողերի 39.8 տոկոսը:

2012 թվականին ԼՂՀ-ում ցանքատարածքների ընդհանուր մակերեսը կազմել է 64368.4 հա՝ 2011 թվականի համեմատ աճելով շուրջ 7526.6 հա-ով կամ 13.2 տոկոսով:

Ցանքատարածքների գերակշռող մասը՝ 59106.1 հա-ը (91.8 տոկոսը) կազմել են հացահատիկային մշակաբույսերի (ներառյալ եգիպտացորեն) տարածքները, ինչը նախորդ տարվա համեմատ ավել է 6388.7 հա-ով կամ 12.1 տոկոսով, ընդ որում աշնանացանի տարածքները կազմել են 52380.1 հա, որից՝ 34478.4 հա ցորեն և 17901.7 հա գարի, իսկ գարնանացանինը՝ 6726.0 հա, որից՝ 130.3 հա ցորեն, 1689.5 հա գարի, 4.0 հա վարսակ, 1700.5 հա հաճար և 3201.7 հա եգիպտացորեն:

ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՔՆԵՐՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ

/հեկտար/

Հ/հ	Շրջանը	Ցանկել է հացահատիկ ընդամենը	որից		այդ թվում						
			աշնանացան	գարնանացան	ցորեն		գարի		վարսակ	հաճար	եգիպտացորեն
					աշնանացան	գարնանացան	աշնանացան	գարնանացան			
1	Ասկերան	13338.6	10964.6	2374.0	8633.6	15.2	2331.0	178.4	4.0	749.8	1426.6
2	Հադրութ	8084.0	7500.0	584.0	5583.0	2.0	1917.0	203.0	-	25.0	354.0
3	Մարտակերտ	6101.7	5135.5	966.2	4594.8	21.0	540.7	131.5	-	216.7	597.0
4	Մարտունի	13145.4	12335.0	810.4	9563.0	52.9	2772.0	255.6	-	30.0	471.9
5	Շահումյան	142.2	133.0	9.2	117.2	-	15.8	-	-	-	9.2
6	Շուշի	120.0	70.0	50.0	70.0	-	-	12.0	-	26.0	12.0
7	Քաշաթաղ	18174.2	16242.0	1932.2	5916.8	39.2	10325.2	909.0	-	653.0	331.0
Ընդամենը		***59106.1***	***52380.1***	***6726.0***	***34478.4***	***130.3***	***17901.7***	***1689.5***	***4.0***	***1700.5***	***3201.7***

Հանրապետությունում ցանված հացահատիկային մշակաբույսերի 59106.1 հա տարածքներից փաստացի հնձվել է 58517.6 հա, միջին բերքատվությունը կազմել է 17.7 g/հա, ինչը նախորդ տարվա համեմատ նվազել է 1.4 g/հա-ով կամ 7.3 տոկոսով: Դրա փոխարեն, 2012 թվականին գրանցվել է հացահատիկային մշակաբույսերի աննախադեպ բերք, կալսվել է 103622.5 տոննա հացահատիկ, ինչը նախորդ տարվա համեմատ ավել է 7211.5 տոննայով կամ 7.5 տոկոսով, իսկ վերջին հինգ տարիների միջին տարեկան բերքը գերազանցել է ավելի քան 40.0 տոկոսով:

Չնայած հացահատիկի բերքի բարձր ցուցանիշը հիմնականում պայմանավորված է ընդհանուր ցանքատարածքների մակերեսի ավելացմամբ, այդուհանդերձ ԼՂՀ-ում նման ցուցանիշ չի արձանագրվել ոչ նախապատերազմյան, ոչ էլ հետպատերազմյան տարիներին:

Ավելին, նախատեսվում է առաջիկա տարիներին ավելացնել հացահատիկային մշակաբույսերի արտադրությունը ինտենսիվ ճանապարհով՝ ի հաշիվ բերքատվության բարձրացման:

ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ, ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ

Հ/h	Շրջանը	Ցանված տարածքը (հա)			Փաստացի հավաքված տարածքը (հա)			Կալսված բերքը (տ)			Բերքատվությունը (g/հա)		
		2011թ.	2012թ.	2012թ-ը 2011թ-ի նկատմամբ, %-ով	2011թ.	2012թ.	2012թ-ը 2011թ-ի նկատմամբ, %-ով	2011թ.	2012թ.	2012թ-ը 2011թ-ի նկատմամբ, %-ով	2011թ.	2012թ.	2012թ-ը 2011թ-ի նկատմամբ, %-ով
1	Ասկերան	13374.4	13338.6	99.7	12062.2	13039.9	108.1	21199.2	25520.8	120.4	17.6	19.6	111.4
2	Հադրութ	7922.0	8084.0	102.0	7517.0	8007.0	106.5	15862.4	15897.0	100.2	21.1	19.9	94.3
3	Մարտակերտ	8709.6	6101.7	70.1	8386.8	5988.9	71.4	16612.8	7586.7	45.7	19.8	12.7	64.1
4	Մարտունի	15310.3	13145.4	85.9	15310.3	13145.4	85.9	28616.4	21887.3	76.5	18.7	16.7	89.3
5	Շահումյան	152.2	142.2	93.4	152.2	142.2	93.4	265.7	322.4	121.3	17.5	22.7	129.7
6	Շուշի	198.0	120.0	60.6	198.0	120.0	60.6	147.2	209.4	142.3	7.4	17.5	236.5
7	Քաշաթաղ	7050.9	18174.2	257.8	6758.3	18074.2	267.4	13707.3	32198.9	234.9	20.3	17.8	87.7
Ընդամենը		***52717.4***	***59106.1***	***112.1***	***50384.8***	***58517.6***	***116.1***	***96411.0***	***103622.5***	***107.5***	***19.1***	***17.7***	***92.7***

Ընդհանուր առմամբ, հնձվել է 34388.7 հա ցորեն, 19320.0 հա գարի, 1664.0 հա հաճար և 3140.9 հա եգիպտացորեն:

ՑՈՐԵՆԻ, ԳԱՐՈՒ, ՀԱՃԱՐԻ ՈՒ ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ, ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ

Հ/h	Շրջանը	Ցորեն			Գարի			Հաճար			Եգիպտացորեն		
		Հավաքվել է փաստացի (հա)	Կալվել է (տ)	Բերքատվությունը (g/հա)	Հավաքվել է փաստացի (հա)	Կալվել է (տ)	Բերքատվությունը (g/հա)	Հավաքվել է փաստացի (հա)	Կալվել է (տ)	Բերքատվությունը (g/հա)	Հավաքվել է փաստացի (հա)	Կալվել է (տ)	Բերքատվությունը (g/հա)
1	Ասկերան	8508.7	16045.4	18.9	2362.4	2867.6	12.1	746.0	962.6	12.9	1418.8	5639.2	39.7
2	Հադրութ	5585.0	11004.6	19.7	2047.0	3191.5	15.6	25.0	30.5	12.2	350.0	1670.4	47.7
3	Մարտակերտ	4604.9	5070.7	11.0	633.0	523.8	8.3	184.0	166.7	9.1	567.0	1825.5	32.2
4	Մարտունի	9615.9	15926.4	16.6	3027.6	3742.0	12.4	30.0	33.5	11.2	471.9	2185.4	46.3
5	Շահումյան	117.2	271.8	23.2	15.8	22.1	14.0	-	-	-	9.2	28.5	31.0
6	Շուշի	70.0	119.0	17.0	12.0	21.6	18.0	26.0	30.4	11.7	12.0	38.4	32.0
7	Քաշաթաղ	5887.0	10232.4	17.4	11222.2	20306.8	18.1	653.0	862.9	13.2	312.0	796.8	25.5
Ընդամենը		***34388.7***	***58670.3***	***17.1***	***19320.0***	***30675.4***	***15.9***	***1664.0***	***2086.6***	***12.5***	***3140.9***	***12184.2***	***38.8***

Ցորենի բերքատվության ամենաբարձր ցուցանիշը (չհաշված Շահումյանի շրջանը՝ 23.2 g/հա) գրանցվել է Հադրութի շրջանում՝ 19.7 g/հա, ամենացածրը՝ Մարտակերտի շրջանում -

11.0 g/հա, գարու ամենաբարձր բերքատվությունը գրանցվել է Քաշաթաղի շրջանում՝ 18.1 g/հա, իսկ ամենացածրը՝ Մարտակերտի շրջանում - 8.3 g/հա, եգիպտացորենի ամենաբարձր բերքատվությունը գրանցվել է Հադրութի շրջանում՝ 47.7 g/հա, ամենացածրը՝ Քաշաթաղի շրջանում – 25.5 g/հա:

Հացահատիկային մշակաբույսերի 2012 թվականի բերքահավաքը կազմակերպելու նպատակով ստեղծված հանրապետական օպերատիվ շտաբի աշխատանքի արդյունքում հաջողվել է գրեթե անկորուստ (բացառությամբ Մարտակերտի շրջանի 7.3 հա հրդեհված տարածքի) հավաքել բերքը:

Հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի աշխատանքներում ընդգրկվել է ընդամենը 269 միավոր հացահատիկահավաք կոմբայն, այդ թվում 182 միավոր ԼՂՀ-ում առկա և 87 միավոր ՀՀ-ից ներգրավված գյուղտեխնիկա:

Հատկանշական է, որ 2012 թվականին «Սերմնաբուծության, սելեկցիոն նվաճումների փորձարկման, պահպանության և սերմերի որակի ստուգման կենտրոն» ՓԲԸ-ի կողմից արտադրվել է ավելի քան 447.0 տոննա աշնանացան ցորենի սերմացու, որից 384.4 տոննա փոխառության կարգով տրամադրվել է հողօգտագործողներին:

Գարնանացան մշակաբույսերի ցանման, պարարտացման, ցանքսերի սնուցման և խնամքի այլ աշխատանքների իրականացման նպատակով 2012 թվականին հանրապետություն է ներկրվել և որպես պետական աջակցություն, փոխառության կարգով, հողօգտագործողներին տրամադրվել գարնանացան մշակաբույսերի սերմեր, պարարտանյութեր և տարբեր թունանյութեր:

ԼՂՀ ՆԵՐԿՐՎԱԾ ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԵՐԻ ԵՎ ԱԳՐՈՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ՔԱՆԱԿՆԵՐԸ

Ագրոքիմիկատի անվանումը	Ներկրված քանակը (կգ, լ)	Մշակաբույսի անվանումը	Ներկրված քանակը (տ)
Կրիստալոն հատուկ	3000	Գարի	134.0
Կրիստալոն դեղին	1000	Հաճար	140.0
Կրիստալոն շագանակագույն	1000	Եգիպտացորեն	54.0
Յարա ֆոլիկեր	4000	Հնդկացորեն	60.0
Ֆենագոն	2000	Կարտոֆիլ	540.0
Գեզագարդ	500	Արևածաղիկ	2.8
Պումա սուպեր	400	Առվույտ	3.5
Տարգա սուպեր	200	Կորնգան	84.0
Գրոդիլ Մաքսի	118		
Տիտուս	40		

Պետք է նշել, որ ներկրված գարնանացան մշակաբույսերի սերմերը հողօգտագործողներին տրամադրվել է արժեքի որոշակի սուբսիդավորմամբ՝ սեփականաշնորհված տարածքների համար 50, իսկ վարձակալված տարածքների համար՝ 40 տոկոսով, բացառությամբ կարտոֆիլի, որը բոլորին տրամադրվել է 170.0 դրամով:

2012թ. բերքի տակ հանրապետությունում ցանվել է 649.0 հա հնդկացորեն, 238.0 հա հլածուկ և 741.4 հա արևածաղիկ: 2012 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ

հանրապետությունում հավաքվել է 595.5 հա հնդկացորեն (53.5 հա-ից բերք չի հավաքվել), 238.0 հա հլածուկ և 678.0 հա արևածաղիկ, միջին բերքատվությունը կազմել է համապատասխանաբար՝ 10.2, 15.5 և 13.4 g/հա:

ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ՈՐՈՇ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ, ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ

Հ/h	Շրջանը	Հնդկացորեն				Հլածուկ				Արևածաղիկ			
		Ցանվել է (հա)	Հնձվել է (հա)	Կալսվել է (տ)	Միջին բերքատվությունը (g/հա)	Ցանվել է (հա)	Հնձվել է (հա)	Կալսվել է (տ)	Միջին բերքատվությունը (g/հա)	Ցանվել է (հա)	Հնձվել է (հա)	Կալսվել է (տ)	Միջին բերքատվությունը (g/հա)
1	Ասկերան	77,0	75,0	57,2	7,6	60,0	60,0	36,0	6,0	625,0	565,0	709,8	12,6
2	Հադրութ	68,0	68,0	58,6	8,6	40,0	40,0	96,0	24,0	32,0	32,0	40,0	12,5
3	Մարտակերտ	137,5	97,5	39,1	4,0					38,0	38,0	68,8	18,1
4	Մարտունի	354,5	345,0	442,2	12,8	138,0	138,0	238,0	17,2	40,5	40,5	89,1	22,0
5	Շահումյան												
6	Շուշի	10,0	10,0	10,0	10,0								
7	Քաշաթաղ	2,0								5,9	2,5	2,5	10,0
Ընդամենը		***649,0***	***595,5***	***607,1***	***10,2***	***238,0***	***238,0***	***370,0***	***15,5***	***741,4***	***678,0***	***910,2***	***13,4***

Բնական աղետների և սխալ ագրոմշակման հետևանքով հանրապետության հացահատիկի ցանքատարածքներին էական վնաս է հասցվել, որով և պայմանավորված է բերքատվության ցուցանիշների նվազումը:

ԼՂՀ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻ ԵՎ ՍԽԱԼ ԱԳՐՈՄՇԱԿՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ 100 ՏՈԿՈՍՈՎ ՏՈՒԺԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՆ ԱՌ 30.11.2012 ԹՎԱԿԱՆԸ

Հ/h	Շրջանի անվանումը	Կարկտահարություն և սելավներ							Երաշտ		Սխալ ագրոմշակում
		Հացահատիկ	Եգիպտացորեն	Հնդկացորեն	Տեխնիկական	Կարտոֆիլ	Բանջարաբոստան	Բազմամյա տնկարկ	Հացահատիկ	Հնդկացորեն	Հացահատիկ
1	Ասկերան	9,0		2,0	60,0	1,0			98,0		48,3
2	Հադրութ								75,0		
3	Մարտակերտ	23,0							1943,0	40.0	
4	Մարտունի	7,0		5,0	2,0			20,0	48.3		
5	Քաշաթաղ	39,5	30,0				199,4	8,7			
Ընդամենը		***78,5***	***30,0***	***7,0***	***62,0***	***1,0***	***199,4***	***28,7***	***2164.3***	***40.0***	***48,3***

Ըստ ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայության տվյալների 2012 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին ԼՂՀ տարածքից արտահանվել է 12234.0 տոննա ցորեն (հաճար), 7187.4 տոննա գարի և 5551.4 տոննա եգիպտացորեն:

Բերքահավաքի մեկնարկից սկսած ժամանակահատվածում՝ հունիս-դեկտեմբեր ամիսներին, ԼՂՀ տարածքից արտահանվել է 9543.5 տոննա ցորեն (հաճար), 7080.1 տոննա գարի և 5533.4 տոննա եգիպտացորեն:

ՀԱՑԱՀԱՏԻԿԻ ԲԵՐՔԻ ՇԱՐԺԸ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ

/տոննա/

Հ/հ	Մշակաբույսը	Արտադրվել է առ 20.12.12թ.	Արտահանվել է 2012թ. հունվար-դեկտեմբերին	այդ թվում՝ բերքահավաքի մեկնարկից (հունիս-դեկտեմբերին)	Մնացորդը 6 = 3 - 5
1	2	3	4	5	6
1	Ցորեն (հաճար)	61156,5	12234,0	9543,5	51613,0
2	Գարի	30701,5	7187,4	7080,1	23621,4
3	Եգիպտացորեն	12004,0	5551,4	5533,4	6470,6
Ընդամենը		***103862,0***	***24972,8***	***22157,0***	***81705,0***

2012 թվականին նախորդ տարվա համեմատ աճել են մի շարք մշակաբույսերի արտադրության ծավալները, ընդ որում, եթե տեխնիկական մշակաբույսերի և թթի մասով աճը կազմել է համապատասխանաբար՝ 26.6 և 7.8 տոկոս, ապա հատիկաընդեղենային մշակաբույսերի, պտղի ու հատապտղի և խաղողի արտադրության ծավալները աճել են համապատասխանաբար՝ 61.4 տոկոսով, 3.5 և 2.0 անգամ:

Նախորդ տարվա համեմատ նվազել են կարտոֆիլի և բոստան-պարենային մշակաբույսերի արտադրության ծավալները համապատասխանաբար՝ 2.9 և 7.2 տոկոսով, իսկ բանջարեղենի համախառն բերքը մնացել է գրեթե նույնը:

ՈՐՈՇ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

/տոննա/

	2011թ.	2012թ.	Աճի տեմպը (տոկոս)
Հատիկաընդեղենային մշակաբույսեր	839.1	1354.3	161.4
Տեխնիկական մշակաբույսեր	1541.1	1950.3	126.6
Կարտոֆիլ	8597.3	8344.0	97.1
Բանջարեղեն	8143.1	8131.8	99.9
Բոստան-պարենային մշակաբույսեր	10447.3	9692.2	92.8
Պտուղ և հատապտուղ	8699.2	30677.7	3.5 անգ.
Խաղող	4964.0	10123.3	2.0 անգ.
Թուք	2553.3	2753.0	107.8

Կարևորելով բուսաբուծության ոլորտում բույսերի պաշտպանության միջոցների դերը, գյուղատնտեսության նախարարությունը պարբերաբար լրացումներ է կատարում ԼՂՀ-ում օգտագործման համար թույլատրված բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների անվանացանկում և հսկողություն սահմանում թույլատրելի միջոցների վաճառքի նկատմամբ: Այս տեսակետից հարկ է նշել, որ 2012 թվականին ԼՂՀ գյուղնախարարության

աշխատակազմի երկրագործության պետական տեսչության կողմից հանրապետության թունաքիմիկատների վաճառակետերում իրականացվել են տեսչական ստուգումներ:

Հաշվետու տարվա հոկտեմբերից հանրապետությունում սկսվել են 2013 թվականի բերքի տակ աշնանացանի հետ կապված աշխատանքները:

Համաձայն նախարարության օպերատիվ տվյալների հանրապետությունում 2013 թվականի բերքի տակ կատարվել է 57529.4 հա հերկ, ինչը նախորդ տարվա համեմատ ավել է 1647.9 հա-ով կամ 2.9 տոկոսով, ցանվել է 48587.3 հա աշնանացան հացահատիկ, ինչը նախորդ տարվա համեմատ պակաս է 2928.7 հա-ով կամ 5.7 տոկոսով:

2013 ԹՎԱԿԱՆԻ ԲԵՐՔԻ ՏԱԿ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԵՐԿԻ, ՑԱՆՎԱԾ ԱՇՆԱՆԱՑԱՆ ՀԱՑԱՀԱՏԻԿԻ ԵՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ

/հեկտար/

Հ/հ	Շրջանները	Կատարվել է հերկ	որից		Նախատեսվում է գարնանացան ըստ հայտերի
			ցանվել է աշնանացան հացահատիկ	նախատեսվում է գարնանացանի և սև ցելի տակ	
1	Ասկերան	11908,5	8900,4	3008,1	2992,4
2	Հադրութ	7780,0	7300,0	480,0	930,4
3	Մարտակերտ	5941,8	4371,8	1570,0	1079,2
4	Մարտունի	14670,1	12742,1	1928,0	1858,8
5	Շահումյան	149,0	141,0	8,0	20,9
6	Շուշի	86,0	73,0	13,0	14,5
7	Քաշաթաղ	16994,0	15059,0	1935,0	1133,5
Ընդամենը		***57529,4***	***48587,3***	***8942,1***	***8029,7***

Նախապատրաստական աշխատանքներ են տարվել նաև 2013 թվականի գարնանացանի համար: Որպես պետական աջակցություն նախատեսվում է հողօգտագործողներին փոխառության կարգով տրամադրել գարնանացան հետևյալ մշակաբույսերի սերմեր. հաճարի, եգիպտացորենի, հնդկացորենի, կարտոֆիլի, արևածաղկի, սորգոյի, առվույտի, կորնգանի և սորգո-սուդանյան հիբրիդի:

Համաձայն շրջաններից ներկայացրած հայտերի գարնանացանի տակ նախատեսվում է 8029.7 հա տարածք:

Վերջին տարիների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեծ մասը բաժին է ընկնում բուսաբուծությանը, փոքր մասը՝ անասնապահությանը: Կարևորելով գյուղատնտեսության ճյուղերի համաչափ զարգացումը, ԼՂՀ կառավարությունը հետևողական քայլեր է իրականացնում նաև անասնաբուծության ճյուղի արդյունավետության բարձրացման համար: Բավական է նշել, որ միայն 2012 թվականին 1665.0 մլն դրամ է ուղղվել անասնաբուծության տարբեր ճյուղերի վարկավորման նպատակով:

Տոհմային կորիզի ստեղծման, տոհմային գործի վերականգնման և տեղական նախրի բարելավման նպատակով դեռևս 2008 թվականին հանրապետությունում ստեղծվել է «Տոհմային կայան» ՓԲԸ-ն:

Այսօրվա դրությամբ կայանի ընդհանուր գլխաքանակը հասնում է 480-ի: Օրական արտադրվում է շուրջ 2000 կգ կաթ՝ 4.2 տոկոս միջին յուղայնությամբ:

2009-2012 թվականների ընթացքում «Տոհմային կայան»-ում արտադրվել է 1123.0, իսկ միայն 2012 թվականին՝ 656.0 տոննա կաթ, որը կազմում է 2009-2012 թվականների արտադրանքի 58.4 տոկոսը:

Անասնաբուծության, մասնավորապես, խոզաբուծության ռիսկայնությունը իջեցնող նախապայմաններին ծանոթացնելու, կենդանիների կերակրման, խնամքի և պահվածքի աշխատանքները ճիշտ իրականացնելու նպատակով հաշվետու տարում նախարարության մասնագետները հանդիպումներ են ունեցել մի շարք ֆերմերների հետ՝ տալով անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվություն:

2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ նախորդ տարվա համեմատ հանրապետությունում գրանցվել է գյուղատնտեսական բոլոր կենդանիների գլխաքանակի աճ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԳԼԽԱՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ

/գլուխ/

Շրջանների անվանումը	ԽԵԱ			այդ թվում՝ կովեր			Խոզեր			ՄԵԱ			Թռչուններ		
	առ 01.01.2012թ.	առ 01.01.2013թ.	Աճի տեմպը, %	առ 01.01.2012թ.	առ 01.01.2013թ.	Աճի տեմպը, %	առ 01.01.2012թ.	առ 01.01.2013թ.	Աճի տեմպը, %	առ 01.01.2012թ.	առ 01.01.2013թ.	Աճի տեմպը, %	առ 01.01.2012թ.	առ 01.01.2013թ.	Աճի տեմպը, %
Ստեփանակերտ	610	580	95.1	228	160	70.2	50	670	13.4 անգ.	3200	1600	50.0	52207	51405	98.5
Ասկերան	9363	10877	116.2	3796	4506	118.7	1564	4993	3.2 անգ.	13197	18592	140.9	60780	81487	134.1
Հադրութ	6752	7992	118.4	2982	3285	110.2	1230	3275	2.7 անգ.	6381	8548	134.0	42747	51643	120.8
Մարտակերտ	9356	10295	110.0	4368	4567	104.6	1493	2965	198.6	13365	11193	83.7	48890	52588	107.6
Մարտունի	8964	10187	113.6	4232	4566	107.9	1791	4150	2.3 անգ.	9437	11827	125.3	125580	90954	72.4
Շահումյան	2895	3508	121.2	1175	1317	112.1	199	536	2.7 անգ.	1180	2489	2.1 անգ.	5750	5856	101.8
Շուշի	914	1051	115.0	360	420	116.7	175	482	2.8 անգ.	681	825	121.1	3873	4815	124.3
Քաշաթաղ	9122	11754	128.9	3512	4756	135.4	1240	3338	2.7 անգ.	14070	21900	155.7	15937	19185	120.4
Ընդամենը	***47976***	***56244***	***117.2***	***20653***	***23577***	***114.2***	***7742***	***20409***	***2.6 անգ.***	***61511***	***76974***	***125.1***	***355764***	***357933***	***100.6***

ԽԵԱ-ի գլխաքանակը կազմել է 56244, որից կովեր՝ 23577, ինչը նախորդ տարվա համեմատ ավել է համապատասխանաբար՝ 17.2 տոկոսով կամ 8268 գլխով և 14.2 տոկոսով կամ 2924 գլխով:

Խոզերի գլխաքանակը կազմել է 20409՝ նախորդ տարվա համեմատ աճելով 2.6 անգամ, որը պայմանավորված է խոզաբուծության ոլորտում վարկավորման վերսկսմամբ:

ՄԵԱ-ի գլխաքանակը կազմել է 76974, ինչը նախորդ տարվա համեմատ ավել է 25.1 տոկոսով կամ 15463 գլխով:

Թռչունների գլխաքանակը կազմել է 357933՝ նախորդ տարվա համեմատ աճելով ընդամենը 0.6 տոկոսով կամ 2169 թևով, ինչը պայմանավորված է տարեվերջին մորթված գլխաքանակի ավելացմամբ:

Համեմատության համար նշենք, որ 2012 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ հանրապետությունում թռչունների գլխաքանակը կազմել է 447027, այսինքն ավելի քան 89.0 հազար թև (գլխավորապես Մարտունու շրջանում («Լուսակերտ»-ի թռչնաֆաբրիկա) և Ստեփանակերտում) ենթարկվել է մորթի:

2012 թվականին նախորդ տարվա համեմատությամբ հանրապետությունում աճել է մսի, կաթի և ձվի արտադրությունը համապատասխանաբար՝ 12.2, 5.7 և 12.8 տոկոսով, բրդի արտադրությունը նվազել է 12.7 տոկոսով:

ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

	2011թ.	2012թ.	Աճի տեմպը, (տոկոս)
Միս (կենդանի քաշով), *տոննա*	4810.8	5399.5	112.2
Կաթ, *տոննա*	34611.9	36572.6	105.7
Ձու, *հազ. հատ*	22910.2	25850.5	112.8
Բուրդ (ֆիզիկական քաշով), *տոննա*	175.9	153.6	87.3

2012 թվականին հանրապետության անասնահամաճարակային իրավիճակը ընդհանուր առմամբ կայուն էր, բացառությամբ «աֆրիկական ժանտախտ» և բրուցելյոզ հիվանդությունների առանձին դեպքերի:

Հաշվետու տարում հանրապետության մի շարք շրջաններում՝ Ասկերանում, Մարտունիում և Ստեփանակերտում արձանագրվել են խոզերի «աֆրիկական ժանտախտ» հիվանդության դեպքեր: Հիվանդության հետագա տարածումը կանխարգելելու նպատակով սատկած և անարյուն եղանակով ոչնչացված խոզերը հորվել են անասնագերեզմանոցներում, իսկ խոզաբուծությամբ զբաղվող անհատներին հանձնարարվել է սահմանել խոզերի փակ, մեկուսացված պահվածք:

Հանրապետությունում 2012 թվականին «աֆրիկական ժանտախտ» հիվանդությունից սատկել և անարյուն եղանակով ոչնչացվել է 115 գլուխ խոզ, որից՝ 64 գլուխ Մարտունու, 13 գլուխ Ասկերանի շրջաններում և 38 գլուխ՝ Ստեփանակերտում:

Հաշվետու տարում «Հանրապետական անասնաբուժական լաբորատորիա», Ստեփանակերտի քաղաքային և 7 շրջանային «Անասնաբուժական սպասարկման կայան» ՊՈԱԿ-ների կողմից կատարվել են գյուղատնտեսական կենդանիների և թռչունների վարակիչ հիվանդությունների նկատմամբ անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումներ (14 հիվանդությունների նկատմամբ), կատարվել է 1433400 սրսկում, լաբորատոր քննության է ենթարկվել արյան 67857 նմուշ, որից հիվանդներ՝ 820 նմուշ (1.2 տոկոս), ինչպես նաև անասնաբուժա-սանիտարական հսկողություն է իրականացվել կենդանական ծագումով մթերքների իրացման և մշակման նկատմամբ:

Համեմատության համար նշենք, որ 2011 թվականին անասնաբուժական կայանների կողմից կատարվել է 953887 սրսկում, լաբորատոր քննության է ենթարկվել արյան 43686 նմուշ, որից հիվանդներ՝ 708 նմուշ (1.6 տոկոս): Տվյալներից երևում է, որ 2012 թվականին անասունների հիվանդացածությունը նախորդ տարվա համեմատ նվազել է 0.4 տոկոսով, իսկ սրսկումների թիվն աճել՝ 33.5 տոկոսով:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել այնպիսի հիվանդությունների կանխարգելմանը, որոնք ընդհանուր են մարդկանց և կենդանիների համար (սիբիրախտ, դաբաղ, բրուցելյոզ, տուբերկուլյոզ, շների կատաղություն, թռչնագրիպ):

Նշված միջոցառումների իրականացման նպատակով պետական բյուջեից հատկացվել է 300392.2 հազար դրամ, որից՝ 274551.4 հազար դրամ կանխարգելիչ պատվաստումների իրականացման, իսկ 25840.8 հազար դրամ՝ կենսապատվաստուկներ ձեռք բերելու համար:

Հաշվետու տարում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունից օգնության կարգով ներկրվել են 27700.38 հազար դրամի չափով կենսապատվաստուկներ:

2012 թվականին ԼՂՀ գյուղնախարարության աշխատակազմի անասնաբուժական և անասնապահական պետական տեսչության կողմից ԼՂՀ տարածքում տեղակայված մսի, ինչպես նաև կենդանական ծագումով մթերքների իրացման կետերում իրականացվել է 42 տեսչական ստուգում: Արդյունքում կարգը խախտած 8 ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվել են ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված տուգանքներ՝ յուրաքանչյուրին 30000-ական դրամ: Տուգանքի ընդհանուր չափը կազմել է 240.0 հազար դրամ, որը մուտքագրվել է պետական բյուջե:

Անասնաբուժա-սանիտարական միջոցառումների արդյունավետության բարձրացման նպատակով 2012 թվականին շահագործման է հանձնվել «Հանրապետական անասնաբուժական լաբորատորիա» ՊՈԱԿ-ի նոր շենքը, որը զգալիորեն նպաստում է բոլոր տեսակի վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների ժամանակին և ճշգրիտ ախտորոշմանը, ինչպես նաև դրականապես ազդում հիվանդությունների կանխարգելման և վերացման ուղղությամբ տարվող պայքարի միջոցառումների կազմակերպման վրա:

Վերոհիշյալ տարում սկսվել և ընթացքի մեջ են «Մարտակերտի և Հադրութի անասնաբուժական սպասարկման կայան» ՊՈԱԿ-րի նոր վարչական շենքերի կառուցման աշխատանքները:

Բուսաբուծության և անասնաբուծության համաչափ զարգացման, ինտենսիվ գյուղատնտեսության վարման նախապայմաններից մեկն էլ հանդիսանում է գյուղտեխնիկայով ապահովվածությունը:

Գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների հավաքակազմի թարմացման ու վերազինման նպատակով ԼՂՀ կառավարությունը վերջին տարիներին զգալի միջոցներ է ներդնում:

Անհրաժեշտ է նշել, որ 2012 թվականին ձեռք է բերվել 55 միավոր 1385.0 մլն դրամ արժողությամբ գյուղտեխնիկա, այդ թվում՝ 10 անիվավոր և 6 թրթուրավոր տրակտոր, 20 գութան, 16 հացահատիկահավաք և 1 կերահավաք կոմբայն, 2 բուլդոզեր:

2012 թվականի վերջին հանրապետությունում գրանցված և հաշվառման էր վերցված 1925 միավոր գյուղատնտեսական և այլ ինքնագնաց տեխնիկա, այդ թվում՝ 294 հացահատիկահավաք և 3 սիլոսահավաք կոմբայն, 796 անիվավոր և 772 թրթուրավոր տրակտոր, 10 բուլդոզեր, 11 խոտհնձիչ, 39 այլ տեխնիկա:

Հաշվետու տարում ԼՂՀ գյուղնախարարության աշխատակազմի գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության կողմից վերագրանցվել ու հաշվառումից հանվել է 61 միավոր գյուղատնտեսական և այլ ինքնագնաց տեխնիկա, ինչպես նաև հաշվառվել 11 միավոր նոր գյուղատնտեսական տեխնիկա: Նշված գործընթացների արդյունքում տրամադրվել են 22 պետհամարանիշներ և 31 տեխնիկական վկայագրեր:

Նույն տարում դասընթացներն ավարտած և քննությունները հանձնած 2 քաղաքացիների տրվել է տրակտորիստ-մեքենավարի վկայական, ինչպես նաև 2 հին և 3 կորցրած վկայականների փոխարեն տրամադրվել են նոր վկայականներ: Իրականացված աշխատանքների արդյուքում ԼՂՀ պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 385.0 հազար դրամ:

Գյուղատնտեսության զարգացումը պահանջում է ոչ միայն ներքին ռեսուրսների, այլև զարգացած երկրների կողմից հնարավոր աջակցությունների նպատակաուղղված օգտագործում, առաջավոր փորձի փոխանակման միջոցով ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում: Այդ տեսակետից գյուղատնտեսության նախարարությունն օգտագործում է ամեն մի հնարավորություն՝ արտասահմանյան կազմակերպությունների հետ տնտեսական կապերի ստեղծման և ամրապնդման ուղղությամբ:

Պետք է նշել, որ ԼՂՀ գյուղնախարարությունը սերտ փոխհամագործակցության մեջ է ՀՀ-ի համանուն կառույցի հետ, և ոլորտի տարբեր հարցերի քննարկման ու պարզաբանման նպատակով 2012 թվականին շարունակվել են իրականացվել երկու երկրների գերատեսչությունների աշխատակիցների ու ոլորտի մասնագետների փոխայցելություններ:

Տոհմային անասնապահության զարգացման ու կաթնամթերքի արդյունաբերությանը տեխնոլոգիապես աջակցելու ծրագրերի մշակման, բարձր ցեղայնության տոհմային անասունների ներկրման, վերջիններիս կերակրման, խնամքի և պահվածքի պայմանների տիրապետման գործում մասնագիտական, խորհրդատվական աջակցության տրամադրման, նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ հաշվետու տարում նախարարությունը համագործակցել է միջազգային «Դելավալե» կազմակերպության, GARD ագրոսերվիս, ինչպես նաև չեխական խոշորագույն «Գենոսերվիս» ընկերության հետ:

Գյուղատնտեսության ոլորտի ուսումնասիրման և փորձի փոխանակման նպատակով նշված տարում այցելություններ են իրականացվել Իսրայելի, Ուկրաինայի, Չեխիայի և Գերմանիայի Հանրապետություններ:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ 2012 թվականի հոկտեմբերի 14-ը՝ որպես գյուղատնտեսության աշխատողի օր, առաջին անգամ մեծ շուքով նշվել է ԼՂՀ-ում: Հանրապետության Վերածննդի հրապարակում անց են կացվել տոնական միջոցառումներ, կազմակերպվել է մեծ ու գեղեցիկ տոնավաճառ-ցուցահանդես, իսկ գյուղոլորտի մի խումբ ներկայացուցիչներ ԼՂՀ Նախագահի կողմից արժանացել են պետական պարգևների և արժեքավոր նվերների:

Գյուղատնտեսության ոլորտի 2012 թվականի ձեռքբերումներից կարելի է նշել նաև ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջի բացումը, որը հնարավորություն է տալիս ոչ միայն իրազեկված լինել գյուղատնտեսության բնագավառում տեղի ունեցող բարեփոխումներին և իրադարձություններին, այլև լայն մասնագիտական խորհրդատվության աղբյուր է հանդիսանում հանրապետության հողօգտագործողների ու ֆերմերների համար:

Բացի այդ, հեռուստատեսության և զանգվածային լրատվության այլ միջոցների հետ ձեռքբերած համագործակցության արդյունքում հրապարակվել են գյուղատնտեսության հիմնախնդիրների լուսաբանմանն ուղղված մի շարք հարցազրույցներ, տեսանյութեր, հոդվածներ, հաղորդագրություններ: Տպագրվել են մասնագիտական մի շարք բրոշյուրներ, բուկլետներ և այլ գրականություն:

Կարևորելով գյուղատնտեսության՝ որպես ռիսկային ոլորտի, զարգացման համար ապահովագրության դերը, 2012 թվականին մեկնարկել է անասնապահության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագիր, որի հաջող իրականացմանը զուգահեռ այն տարեցտարի կկիրառվի նաև գյուղատնտեսության մյուս բնագավառներում:

Հաշվի առնելով պարենային անվտանգության հիմնախնդրի լուծման կարևորությունը, ԼՂՀ կառավարության 2012-2017 թվականների գործունեության ծրագրով նախատեսվել է «ԼՂՀ պարենային անվտանգության ապահովման հայեցակարգ»-ի մշակումը: Այդ ուղղությամբ աշխատանքները մեկնարկել են 2012 թվականին:

Պարենային անվտանգության կարևորագույն բաղադրիչներից մեկն էլ սննդամթերքի անվտանգության համակարգն է, որը հանրապետությունում դեռևս լիարժեք չի երաշխավորում բնակչության առողջության համար սննդային գործոնով պայմանավորված հիվանդությունների կանխարգելումը: Այդ առումով նախատեսվում է 2013 թվականին ներդնել ԼՂՀ-ում միջազգային չափանիշներին համապատասխան սննդամթերքի անվտանգության համակարգ: Հաշվետու տարվա ընթացքում հիշյալ կառույցի ստեղծման ուղղությամբ տարվել են որոշակի աշխատանքներ, մասնավորապես՝ մշակվել են ստեղծվելիք կառույցի կարգավիճակն ամրագրող և բնականոն գործունեությունն ապահովող մի շարք իրավական ակտերի նախագծեր:

Հաշվետու ժամանակաշրջանում իրագործվել են Հադրութի շրջանի Բանաձորի և Ուխտաձորի, Մարտակերտի շրջանի Մաղավուզի ենթաշրջանների գյուղատնտեսության զարգացման 2012 թվականի միջոցառումների ծրագրերը: Նախատեսվում է 2013 թվականից գործարկել երեք նմանատիպ ծրագրեր՝ Հադրութի, Ասկերանի և Մարտունու շրջաններում:

Նախարարությանը վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով 2012 թվականին մշակվել և ընդունվել է ավելի քան չորս տասնյակ իրավական ակտ, այդ թվում 1 օրինագիծ, 27 ԼՂՀ կառավարության որոշման նախագիծ, 14 գերատեսչական նորմատիվ հրաման:

Հաշվետու տարում նախարարություն մուտք գործած տարբեր բնույթի 1387 գրություններ սահմանված կարգով ընթացքավորվել են: